

**ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ  
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ**  
**Edu Armenia նախաձեռնություն**



**ՈԼՍՈԼԳԻՆԵՐԻ պետական պարտադիր  
վերապատրաստման դասընթաց 2022**

**Ջետազոտական աշխատանք**

**Թեմա՝ «Ավագ դպրոցի աշակերտի համարժեք  
ինքնագնահատականի ձևավորումը ոլսոլմնական  
գործընթացում»**

Ջետազոտող՝ **Ջասմիկ Արշակյան** (Երևանի  
Ջ.Գալստյանի անվան հ. 83 ավագ դպրոցի քիմիայի  
ոլսոլգչոլհի)

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>2</b>
<b>ԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.....</b>	<b>5</b>
<b>ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....</b>	<b>9</b>
<b>ՉԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ.....</b>	<b>10</b>
<b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>14</b>
<b>ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....</b>	<b>15</b>

**«Միայն առողջ ընդհանուր ինքնագնահատական ունեցող անձը կարող է կառուցողականորեն վերաբերվել սեփական սխալներին և ձախողումներին՝ դրանք վերածելով ուսումնական առաջադրանքների, այլ ոչ թե քննադատի դեմ վրդովմունքի կամ հուսահատության և ցանկացած տեսակի ջանքից հրաժարվելու պատճառների:»**

**Գ.Ա.**

## **Ցուկերման**

### **Ներածություն**

#### **Արդիականությունը**

Վերջին տարիներին ժամանակակից կրթության բովանդակության մեջ տեղի ունեցած փոփոխությունները առարկայական գիտելիքներից, որպես կրթության հիմնական նպատակի, շեշտադրումը տեղափոխել է դեպի սովորողի կրթական կարողությունների, հմտությունների ձևավորման վրա, ինչն էլ ենթադրում է փոփոխություններ դպրոցականների վերահսկման և գնահատման համակարգում:

Յուրաքանչյուր ուսուցիչ, սկսելով աշխատանքը աշակերտի հետ, առաջին իսկ օրերից պետք է մտովի հստակ պատկերացնի շրջանավարտի դիմանկարը, ով ի վիճակի է ինքնուրույն կազմակերպել իր գործունեությունը և տիրապետել սովորելու ունակության հիմունքներին: Այս ամենին հասնելու համար աշակերտը պետք է կարողանա ռեալ գնահատել իր կարողությունները, հիմնավորել իր ուժեղ կողմերը և առանց բարդությամբ ավորվելու հասկանա նաև թույլ կողմերը: Այս համատեքստում խիստ կարևոր է աշակերտների

համընդհանուր ներառումը: Այսօր անհնար է պատկերացնել կրթական համակարգն առանց

համընդհանուր ներառման: Ներառական կրթությունը կրթություն է, որը, չնայած առկա ֆիզիկական, ինտելեկտուալ, սոցիալական, հուզական, լեզվական և այլ բնութագրերին, յուրաքանչյուր երեխայի հնարավորություն է տալիս ընդգրկվելու կրթության և դաստիարակության (զարգացման և սոցիալականացման) ընդհանուր (մեկ, ամբողջական) գործընթացում, որն այնուհետև հասունացող մարդուն թույլ է տալիս դառնալ հասարակության հավասար անդամ, նվազեցնում է նրա տարանջատման և մեկուսացման ռիսկերը:

Սովորողների հաջողության մակարդակը ուղղակիորեն կախված է նրանից, թե որքան գրագետ է կառուցված ուսուցչի աշխատանքը, որպեսզի ձևավորվի նրա **համարժեք ինքնագնահատականը** մինչև դպրոցական կրթության ավարտը: Վերջին 12 տարիներին (ավագ դպրոցի բացման առաջին իսկ օրվանից սկսած մինչ այսօր) աշխատում են հանրակրթության ավագ աստիճանում և աշխատանքիս ընթացքում բախվել են հատկապես ցածր և բարձր ինքնագնահատականով աշակերտների ներառման բազում խնդիրների: Հաճախ են հանդիպում այնպիսի աշակերտների, որոնց ինքնաընկալման, ամենալավը երևալու և շրջապատի՝ ուսուցիչների, դասընկերների իրական գնահատականի միջև առկա է անհամապատասխանություն: Այս և նմանօրինակ խնդիրներն էլ հիմք հանդիսացան **«Ավագ դպրոցի աշակերտի համարժեք ինքնագնահատականի ձևավորումը ուսումնական գործընթացում»** թեմայով հետազոտություն իրականացնելու համար:

Ինչու՞ որոշեցի հետազոտական աշխատանքը կատարել հատկապես ավագ դպրոցի աշակերտների շրջանում:

Գաղտնիք չէ, որ կրթական ավագ աստիճան տեղափոխվելիս անցումային տարիքում փոխելով դպրոցը, աշակերտը հայտնվում է նոր միջավայրում, ինչը բազմաթիվ նոր խնդիրներ է ստեղծում շատ երեխաների մոտ: Հարմարվելու, շրջապատին ինտեգրվելու, իրեն տարբեր կողմերով դրսևորելու և իր «դիրքը դնելու» համար աշակերտը ջանքեր է գործադրում, ինչը ոչ միշտ է հաջողում և խանգարում նրա հետագա ուսումնառության նորմալ ընթացքին: Առավել հաճախ բարդ իրավիճակում են հայտնվում հատկապես այն երեխաները, ովքեր ունեն առանձնացված ցածր կամ բարձր ինքնագնահատական: Այս

պարագայում ուսուցչի, հատկապես դասղեկի գրագետ մոտեցումները, մանկավարժա - հոգեբանական տարաբնույթ աջակցությունները, ինչպես նաև շրջապատի մյուս երեխաների ճիշտ վերաբերմունքը կարող են նպաստել այսօրինակ խնդիրների լուծմանը: Բերեմ երկու օրինակ իմ փորձից, երբ անհրաժեշտ է եղել աշխատել ցածր և խիստ բարձր ինքնագնահատականով տարբեր աշակերտների հետ: Առաջին դեպքում աշակերտն ուներ որոշակի խնդիրներ ( հասկանալի պատճառներով չեմ նշում խնդիրները), ընդունվել էր մեր դպրոց և սովորում էր իմ դասղեկական դասարանում: Առաջին իսկ օրերից նկատվում էր տղայի անբարյացակամ վերաբերմունքը շրջապատի հանդեպ. ագրեսիվ էր, ցանկացած խոսք խոցելի էր իր համար և շարունակ հակաճառում էր անտեղի: Հաճախ ընկերների հետ անթույլատրելի կատակներ էր անում և չգիտակցված վիրավորում նրանց: Դասաժամերին անուշադիր էր և թույլ էր սովորում: Երբեմն փորձում էր նմանվել շրջապատի «լավ տղաներին»: Որոշ ժամանակ անց նկատեցի նաև, որ ծխում է: Հաճախ էի առանձին գրույցներ ունենում նրա հետ, բերում օրինակներ, դասերի ժամանակ փոքրիկ հանձնարարություններ էի տալիս, իսկ պատասխանները գովաբանում՝ թեկուզև ոչ այնքան հաջողված (ի դեպ բավականին ընդունակ էր): Այս և այլ միջոցներով փորձում էի կամաց - կամաց նրան ներգրավել դասապրոցեսին: Կապ էի հաստատում ծնողի հետ, նրբանկատորեն փորձում խոսակցության ժամանակ ներկայացնել նաև խնդիրները, սակայն սկզբնական շրջանում գրեթե նույն կարգի ոչ համարժեք վերաբերմունք ստանում էի նաև ծնողից: Նա ծագած բոլոր կարգի խնդիրներում մեղադրում էր միայն ուսուցիչներին և աշակերտներին: Որոշեցի որոշ ժամանակ ծնողի հետ կապ հաստատելիս ընդհանրապես խնդիրների մասին չխոսել, ընդհակառակը ներկայացնում էի, որ այսօր այսպիսի կամ այնպիսի խրախուսելի վարքագիծ է դստրել երեխան (չնայած այդպիսիք շատ չնչին էին): Միաժամանակ ողջ ուշադրությունս կենտրոնացրել էի միայն երեխայի հետ տարվող աշխատանքների վրա: Նա անընդհատ իմ և նաև մյուս մանկավարժների աննկատ ուշադրության տակ էր: Ես հսկողությանս տակ էի վերցրել որպես իմ օգնական, զբաղեցնում էի փոքրիկ կազմակերպչական հարցերով՝ շարունակելով խրախուսել նրա կողմից կատարած աշխատանքները: Դասարանի աշակերտների հետ նույնպես աշխատում էի առանձին, որպեսզի հանկարծ որևէ մեկը չնեղացներ երեխային: Կամաց - կամաց նկատում էի, որ նա դառնում է ինքնավստահ, չէր խուսափում դաս պատասխանելուց, ավելի հանգիստ էր վերաբերվում դիտողություններին,

որովհետև զգում էր, որ ինքն էլ ուրիշների նման կարող է ամեն ինչի հասնել իր ջանքերի և իր ներուժը ճիշտ օգտագործելու շնորհիվ : 2 -3 ամիս անց ծնողը ինքը եկավ դպրոց և փաստեց, որ երեխան ավելի հանգիստ է դարձել, ուրախությամբ է գալիս դպրոց, սկսել է ավել լավ սովորել, հետաքրքրվել դասերով...Յետագա աշխատանքներս շարունակվեցին ծնողի հետ սերտ համագործակցությամբ և նույնիսկ միասնական ջանքերով հասանք նրան, որ երեխան ծխելը այլևս չշարունակեց: Յետագայում, երբ ամեն ինչ կարգավորվել էր, ծնողն արտահայտվեց, որ մինչ այդ երեխան տանը իրենց հետ նույնպես կոպիտ էր և ագրեսիվ, վիրավորում էր հաճախ, մեկուսանում: Սակայն հիմա բավականին առաջընթաց է նկատվում: Իհարկե առաջընթացը բոլորս էլ նկատում էինք: Ի ուրախությունս պետք է նշեմ, որ այդ աշակերտը կարճ ժամանակ անց ամբողջովին ինքնավստահ էր զգում, լիովին ինտեգրվեց միջավայրին և դպրոցն ավարտեց իր հանդեպ համարժեք ինքնագնահատականով:

Մյուս դեպքում գործ ունեինք խիստ բարձր ինքնագնահատականով աշակերտի ոչ համարժեք վարքային դրսևորումների և շատ առարկաներից ցածր առաջադիմության հետ` չնայած աշակերտի բարձր ունակություններին: Ուսումնասիրելով և փորձելով հասկանալ պատճառները, պարզեցինք, որ գործ ունենք կարգավիճակային - դերային շփման և փոխազդեցության դժվարությունների տեսակի հետ: Խնդիրները խորքային էին, ընտանիքից բխող, որտեղ ծնողների ոչ նորմալ (բայց արտաքինից խիստ նորմալ ձևացնող) հարաբերությունների արդյունքում (յուրաքանչյուրն իր հերթին ջանք չէր խնայել երեխային պարզապես երես տալու համար, որպեսզի նրա սերը իր հանդեպ լինի գերակշիռ) երեխան մեծացել էր իր մասին խիստ մեծ կարծիք ունենալով: Ցավով եմ նշում, որ դասղեկի, կուլեկտիվի, տնօրենի կողմից գործադրված բոլոր կարգի ջանքերն ապարդյուն անցան, որովհետև յուրաքանչյուր իրավիճակի կարգավորման ճանապարհին բախվում էինք հասարակության մեջ բավական ազդեցիկ դիրք ունեցող ծնողների ակնհայտ և միանշանակ երեխային պաշտպանող, թույլ տված ոչ մի սխալ չընդունող վերաբերմունքին:

Իմ մանկավարժական գործունեության ընթացքում այսպիսի հակասություններից և սխալներից խուսափելու համար անհրաժեշտ է եղել հասկանալ և հստակ պատկերացնել

- **Ի՞նչը կարող է արդյունավետ կերպով ազդել համարժեք ինքնագնահատականի ձևավորման վրա:**

- **Վարքագծային ի՞նչ ցուցանիշներ են համապատասխանում դրան:**

- **Ինչպե՞ս է դա ազդում աշակերտի հաջողության վրա՝ որպես աշակերտ և մարդ:**

Այս հարցերի շուրջ բազմիցս զրույցներ և քննարկումներ են ունեցել իմ դպրոցում կուլեգաներիս հետ, իսկ վերջին օրերին այս թեմայով անցկացրել եմ փոքրիկ հարցում, այնուհետև քննարկում վերապատրաստմանը մասնակցող ավագ դպրոցում դասավանդող ուսուցիչների շրջանակում , լսել նրանց կարծիքը և հանգել այն եզրակացության, որ վերը նշյալ խնդիրները համընդհանուր են հիմնականում բոլոր ավագ դպրոցներում: Եվ համադրելով վերոնշյալ երկու օրինակները, կարող եմ ասել, որ խնդրի լուծման գործընթացում խիստ կարևոր է դեր է կատարում նաև ծնողի դիրքորոշումը, և մեծամասամբ կարողանում ենք հաջողել այս հարցում, եթե գործում է փոխհամագործակցությունը:

## **Վարկած**

Ենթադրվում է, որ ավագ դպրոցի աշակերտների համարժեք ինքնագնահատականի ձևավորմանը կնպաստի.

- ուսուցչի համակարգված աշխատանքը կրթական գործունեության գործընթացում համարժեք ինքնագնահատական ձևավորելու համար
- մանկավարժական այնպիսի հնարքների կիրառումը, ինչպիսիք ստեղծում են համարժեք ինքնագնահատականի ձևավորմանը նպաստող իրավիճակներ:

Նպատակին և վարկածին համապատասխան՝ հետազոտության ընթացքում սահմանել և հետո լուծել հետևյալ

### **խնդիրները.**

- Անցկացնել ավագ դպրոցական տարիքի աշակերտների Էմպիրիկ ինքնագնահատում 10-րդ դասարանում՝ տարեսկզբին, 12 - րդում՝ տարեվերջին
- մշակել առաջարկություններ ուսուցիչների համար մանկավարժական կրթական գործունեության մեջ ինքնագնահատականի ձևավորման վերաբերյալ

- վերլուծել ստացված արդյունքները

Վերը նշված առաջադրանքներն իրականացնելու համար ընտրվել են հետևյալ եթոդները.

1. Էմպիրիկ` դիտարկումներ
2. գրույցներ
3. խաղային և կրթական իրավիճակներ
4. տարբեր ախտորոշման մեթոդներ (**«Իդեալ-հակաիդեալ` Բուդասիի մեթոդիկա», «Սանդուղք», տեխնիկա Տ. Դեմբո-Ս.Ռուբինշտեին (մշակումը ըստ Ա. Մ. Պրիխոժանի)** [4])
5. վիճակագրական. կիրառել մեթոդներ, որոնք օգտագործվում են ստացված տվյալների մշակման ժամանակ:

**Ջետազոտությունն իրականացնել Երևանի Ջ. Գալստյանի անվան հ. 83 ավագ դպրոցի 10- րդ (տարեսկզբին) և 12 - րդ (տարեվերջին) դասարաններում:**

## **Նպատակը**

Ուսումնասիրել ավագ դպրոցական տարիքի երեխաների ինքնագնահատականի առանձնահատկությունները, ինչպես նաև ելնելով հետազոտությունից և իմ աշխատանքային փորձից, բացահայտել կրթական գործունեության գործընթացում դրա համարժեք ձևավորման տեխնիկան և մեթոդները, դրանց արդյունավետության կիրառման ստուգումը:

## **Գիտական ակնարկ**

### **Ի՞նչ է ինքնագնահատականը:**

Ինքնագնահատականը դա` դրական կամ բացասական գնահատական է, ընկալում կամ դատողություն, որը մարդը տալիս է ինքն իրեն հիմնվելով մտքերի, ապրումների և փորձի գնահատման վրա:

Դա հոգեբանության տերմին է, որն ուսումնասիրել են ոլորտի տարբեր մասնագետներ, սակայն այն օգտագործվում է առօրյա խոսքում` ընդհանուր ձևով անդրադառնալու այն արժեքին, որը մարդը տալիս է իրեն: [1]

Կուլպերսմիթը ինքնագնահատական է անվանում անհատի վերաբերմունքն իր նկատմամբ, որն աստիճանաբար զարգանում է և ձեռք է բերում սովորույթի բնույթ. այն դրսևորվում է որպես հավանություն կամ ոչ հավանություն, որի աստիճանը որոշում է անհատի համոզմունքը սեփական արժեքի, նշանակության վերաբերյալ: [2]

Ս.Կուլպերսմիթը ուսումնասիրել է ինքնագնահատականի հոգեբանական պայմանները և կատարել համապատասխան փորձեր: Իր ուսումնասիրություններից մեկի ժամանակ նա առանձնացրել է ինքնագնահատականի երեք մակարդակ.

- **ցածր ինքնագնահատական**
- **միջին ինքնագնահատական**
- **բարձր ինքնագնահատական:**

Բացի այդ, նա նաև որոշել է ինքնագնահատականի այս կամ այն մակարդակի ձևավորման պայմանները:

#### **Ցածր ինքնագնահատականի ձևավորման պայմանները.**

պարզվել է, որ ցածր ինքնագնահատականը սերտորեն կապված է ծնողների փորձերի հետ, երեխայի մեջ ձևավորելու հարմարվողականություն, այսինքն՝ հարմարվողական վարքագիծ: Դա արտահայտվում է նրան ուղղված հետևյալ պահանջներով՝ հնազանդություն, այլ մարդկանց հետ հարմարվելու ունակություն, կախվածություն մեծահասակներից առօրյա կյանքում, կոկիկություն, առանց կոնֆլիկտների փոխգործակցություն հասակակիցների հետ: Երեխաներին ենթարկվելու, կախյալ դիրքի վրա դնելու ծնողների ցանկությունը հանգեցնում է ինքնագնահատականի նվազմանը: Այս իրավիճակում հայտնված երեխան հոգեբանորեն կոտրված է, նա չի վստահում իրեն շրջապատող աշխարհին, զուրկ է սեփական անձնական արժեքի զգացումից:

#### **Միջին ինքնագնահատականի ձևավորման պայմանները.**

միջին ինքնագնահատական ունեցող մի խումբ երեխաների հարցման արդյունքները հնարավորություն են տալիս բացահայտել ընտանիքում նրանց դաստիարակության մի շարք բնորոշ հատկանիշներ: Նման երեխաների



Ճնողները հակված են նրանց նկատմամբ գիջող, հովանավորող դիրք գրավել: Այս խմբում ծնողական պահանջների մակարդակն ավելի ցածր է եղել, քան մյուս երկու խմբերի ծնողներինը: Համեստ նպատակները թույլ են տալիս երեխաներին ընդունել այնպիսին, ինչպիսին կան, հանդուրժող լինել նրանց վարքի նկատմամբ: Եվ մինևույն ժամանակ երեխաների տարբեր ինքնուրույն գործողությունները ծնողների մոտ անհանգստություն են առաջացնում: Այս խմբի երեխաների տևից դուրս անկախ անձնական փորձի ձեռքբերումը սովորաբար սահմանափակ է: Բարձր ինքնագնահատականով երեխաների համեմատ այս խմբի երեխաներն ավելի շատ առաջնորդվում են իրենց մասին այլ մարդկանց կարծիքներով:

### **Բարձր ինքնագնահատականի ձևավորման պայմաններ.**

այս խմբի ընտանիքների կարևոր հատկանիշը հստակ, նախապես հաստատված հեղինակությունն է որոշումների կայացման գործում, հեղինակության և պատասխանատվության միանշանակ դրսևորումը: Ծնողներից մեկն իր վրա է վերցնում հիմնական որոշումները, որոնց շուրջ համաձայն է ամբողջ ընտանիքը: Ավելի քիչ հիմնարար որոշումներ, օրինակ՝ ներքաղաքական հարցերի վերաբերյալ, ընդունվում են հավաքականորեն: Նման ընտանիքներում փոխադարձ վստահության մթնոլորտ է տիրում, յուրաքանչյուր անդամ իրեն զգում է ընդհանուր տան շրջանակում ընդգրկված: Այսպիսով, երեխաների մոտ բարձր ինքնագնահատական է ձևավորվում համախմբվածությամբ և համերաշխությամբ բնութագրվող ընտանիքներում: Երեխայի աչքում ծնողները միշտ հաջողակ են: Նա պատրաստակամորեն հետևում է նրանց կողմից սահմանված վարքագծի օրինաչափություններին, համառորեն և հաջողությամբ լուծում է իր առջև ծառայած առօրյա խնդիրները, քանի որ վստահ է զգում իր կարողությունների վրա: Նա ավելի քիչ է հակված սթրեսի և անհանգստության, բարեհաճ և իրատեսորեն է ընկալում շրջապատող աշխարհը և իրեն:

Ս.Կուպերսմիթը կարծում է, որ ինքնագնահատականի ձևավորման որոշիչ գործոնն ավելի շուտ երեխայի հարաբերություններն են ընտանիքում, քան նրա սոցիալական գոյության ընդհանուր պայմանները:

Ինքնագնահատականը ուսումնասիրող օտարերկրյա այլ

գիտնականները ևս տալիս են տարբեր սահմանումներ:**[3]**

Ըստ Ռոզենբերգի՝ ինքնագնահատականն արտացոլում է այն աստիճանը, որով անհատը զարգացնում է ինքնագնահատականի զգացում, սեփական արժեքի զգացում և դրական վերաբերմունք այն ամենի նկատմամբ, ինչն իր «ես»-ի շրջանակում է: Ուստի ցածր ինքնագնահատականը ենթադրում է սեփական անձի մերժում, ինքնաժխտում, բացասական վերաբերմունք սեփական անձի նկատմամբ:**[2]**

Ամփոփելով ինքնագնահատականի մասին գաղափարները՝ Ի. Ս. Կոնը գրում է, որ այն «ընդհանուր հայտարար է, «ես»-ի վերջնական չափումը, որն արտահայտում է անհատի կողմից իր ընդունման կամ չընդունման աստիճանը, իր նկատմամբ դրական կամ բացասական վերաբերմունքը, բխում է անհատական ինքնագնահատականների ամբողջությունից: **[2]**

Սովորողի ինքնագնահատականը աշակերտի վերաբերմունքն է իր, իր կարողությունների, սուբյեկտիվ հնարավորությունների, բնավորության գծերի, անձնային հատկանիշների, գործողությունների նկատմամբ: Կյանքի բոլոր ձեռքբերումները, միջանձնային փոխհարաբերությունները, ունեցած հաջողությունները կախված են դրա համարժեքությունից:

Ինքնագնահատականը բնորոշ է անհատին, այն թույլ է տալիս վերահսկել սեփական գործունեությունը գնահատման չափանիշների առումով, ինչպես նաև դրսևորել սոցիալական նորմերին համապատասխան կամ ոչ համապատասխան վարքագիծ: Ինչպես յուրաքանչյուր մարդ, այնպես էլ աշակերտը պետք է կարողանա ճիշտ գնահատել իր ինքնագնահատականի մակարդակը, որպեսզի անհրաժեշտության դեպքում աշխատանք տանի դրանք շտկելու համար: Աշակերտի ինքնագնահատականն ազդում է նրա առաջադիմության մակարդակի, մտավոր զարգացման և ուսուցչի ու հասակակիցների հետ հաղորդակցվելու հմտությունների վրա: Իմ աշխատանքի ընթացքում ավելի հաճախ հանդիպել եմ այնպիսի աշակերտների, ովքեր ունենում եմ ինքնագնահատականի գերադրական աստիճան: Այդպիսի աշակերտները դասերի ժամանակ, շրջապատի հանդեպ ոչ բարյացակամ վերաբերմունք են դրսևորում, գոռոզ են, փորձում են ամեն կերպ ապացուցել իրենց գերազանցությունը, գտնում են, որ իրենց ճիշտ չեն գնահատում, տեղին

արված դիտողությունները վերագրում են նախանձի, անտեղի վիրավորվում են և չեն ընկալում ասվածի ճշմարտացիությունը: Իրենց անհաջողությունների մեջ մշտապես մեղավորներ են փնտրում, սակայն երբեք չեն ընդունում իրենց սխալները: Ի տարբերություն ասպիսիների, ցածր ինքնագնահատականով աշակերտները երկչոտ են, անհամարձակ, վախկոտ, անվստահ իրենց քայլերի մեջ, շուտ ընկնում են ուրիշների ազդեցության տակ, սովորաբար նախանձով են լցվում ավելի հաջողակների հանդեպ: Չափից ավելի պահանջկոտությունը իրենց հանդեպ բերում հանգեցնում է բարդությամբ: Անհրաժեշտ է ցածր ինքնագնահատականով երեխաներին ավելի մեծ ուշադրություն հատկացնել: Ուստի մեր աշխատանքի նպատակը չի սահմանափակվում միայն առարկան պատշաճ մակարդակով դասավանդելով, այլ նաև մենք պատասխանատու են աշակերտի անձնային որակների, հոգեբանական կայունության, ճիշտ վարքային դրսևորումների դաստիարակության, մշակման, հղկման և այլն ի համար, քանի որ նշված հատկանիշները ամենաուղիղ ձևով անդրադառնում են ուսման գործընթացի վրա:

Դպրոցականների ցանկացած տեսակի գործունեության մեջ (խաղ, սպորտ, աշխատանք) ինքնագնահատականի ձևավորման և նրանց ընդհանուր հուզական վիճակի բարելավման, ինչպես նաև միջանձնային հարաբերությունների համակարգում նրանց դիրքի փոփոխությունների դրական դինամիկայի համար տարվող աշխատանքները սերտորեն փոխկապակցված են:**[5]**

Ուսուցիչը իր աշխատանքի ընթացքում պետք է անընդհատ վերլուծի ուսումնական գործընթացը, արդյո՞ք աշակերտը գտել է իր գործելաոճը, կարողանու՞մ է աշխատանքի ձևերում դրսևորել ընտրողականություն, անկախություն, արդյոք միջավայրը ստեղծված է աշակերտի բնական ինքնարտահայտման համար, այսինքն սովորողի անձի զարգացման ուղղության ձևավորման համար: Ես խորապես համոզված եմ, որ դպրոցի ամենակարևոր գործառույթներից է օգնել երեխային նայել իր մեջ և որոշել արժեքների այն շարքը, որոնք ներդաշնակ են դարձնում նրա անհատականությունը մարդկային հասարակության մնայուն նորմերին:

**Կիրառական նշանակությունը. այս աշխատանքը կարող է**

հետաքրքրել մանկավարժներին և դպրոցական հոգեբաններին, քանի որ կատարված ուսումնասիրությունները լրացուցիչ նյութ կարող են ծառայել հետազայում սովորողների ինքնագնահատականի վրա կրթական գործունեության ազդեցությունը ավելի խորը ուսումնասիրելու համար:

**Ախտորոշիչ առաջադրանքներ\_ախտորոշման մեթոդների ընտրություն**

- ❖ ախտորոշում
- ❖ ստացված արդյունքների մշակում
- ❖ ուսումնական արձանագրությունների պատրաստում
- ❖ ուսուցիչների և ծնողների համար առաջարկությունների մշակում:

**Ինքնագնահատման համար նաատեսվող մեթոդներ**

**1. Բուդասիի «Իդեալ-հակաիդեալ» մեթոդ (A.S. Budassi)**

Նախատեսված է անձի սեփական որակները ուսումնասիրելու և գնահատելու համար: Բուդասիի ինքնագնահատականի թեստը օգնում է հասկանալ մարդու պատկերացումներն իր մասին, գնահատել պահանջների ու ձգտումների մակարդակը: [4]

Ուսումնասիրության ընթացքում աշակերտները պետք է լրացնեն ներկայացված ձևաթերթիկը, որի վրա նշված են «իդեալի» և «հակաիդեալի» բնութագրիչներ պարունակող 20-ական հատկանիշ:

N	Անուն, ազգանուն, դասարան			
	Իդեալ	միավոր (1)	Հակաիդեալ	միավոր (1)
1	քաջություն		վախկոտություն	
2	բարություն		չարություն	
3	աշխատասիրություն		ծուլություն	
4	հետաքրքրասիրություն		անտարբերություն	
5	քաղաքավարություն		անքաղաքավարություն	

6	համառություն		կոպտություն	
7	ազնվություն		ստախոսություն	
8	կամեցողություն		նախանձություն	
9	խելացիություն		նեղացկոտություն	
10	համեստություն		մեծամտություն	
11	խանդավառություն		վատատեսություն	
12	հեռատեսություն		անհեռատեսություն	
13	հմայք		անհրապույր	
14	նախաձեռնություն		պասսիվություն	
15	կենսուրախություն		տխուր	
16	կարեկցանք		ագահություն	
17	արձագանքողություն		անտարբերություն	
18	հանդուրժողականություն		անհանդուրժողականություն	
19	սեր		ատելություն	
20	տակտ		անտակտ	

### Աղյուսակ 1

#### Գնահատման սանդղակ

Ինքնագնահատական	Ընդհանուր միավորներ
<b>Ցածր</b> ինքնագնահատական	< 4
<b>Չամարժեք</b> ինքնագնահատական	4-ից 6
<b>Բարձր</b> ինքնագնահատական	> 6

### Աղյուսակ 2


Բուդասիի այս մեթոդը չի կարելի ճշգրիտ համարել, քանի որ աշակերտը կարող է ընտրել այն հատկությունները, որոնք ձեռնառու են իրեն:

Թեստավորումն անհրաժեշտ է իրականացնել հանգիստ և ընկերական մթնոլորտում, աշակերտներին նախատրամադրելով ազնիվ պատասխանելուն:

**2. «Սանդուղքի» մեթոդ.** Մարցինկովսկու մշակմամբ

Երեխաները պետք է որոշեն, թե 10 աստիճանից բաղկացած սանդուղքի ո՞ր աստիճանին կդնեն իրենց, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սանդուղքը կազմվել է այնպես, որ ամենաներքևում գտնվում է ամենաանհաջողակը, իսկ ամենավերևում՝ ամենահաջողակը: Յուրաքանչյուր աստիճան 1 միավոր է:

Առաջադրանքի կատարման ընթացքում պետք է ուշադիր հետևենք արդյոք երեխաները ճիշտ են հասկացել դրա էությունը, բացատրել և անհրաժեշտության դեպքում նորից կրկնել ևս մեկ անգամ.



Ինքնագնահատական	Աստիճաններ
Ցածր ինքնագնահատական	1-4
Չամարժեք ինքնագնահատական	5-7
Բարձր ինքնագնահատական	8-10


**Աղյուսակ 3**

Որպեսզի հետազոտությունն ավելի ամբողջական լինի և կարողանանք ճշգրիտ եզրակացություն անել, անհրաժեշտ է յուրաքանչյուր հետազոտվող աշակերտի հետ առանձին խոսել: Դա կարող ենք կատարել ցանկացած հարմար ժամանակ (մինչև մեթոդական աշխատանքը, դրա իրականացման ընթացքում կամ վերջում):

### **3. Տեխնիկա ըստ Տ. Դեմբո-Ս.Ռուբինշտեին (մշակումը ըստ Ա. Մ. Պրիխոժանի)**

Այս մեթոդի միջոցով հետազոտվում է երեխաների կողմից որպես անհատ տարբեր հատկանիշների անմիջական գնահատումը՝ բնավորություն, առողջություն, արտաքին տեսք, ունակություններ, հեղինակություն, հասակակիցների հետ հարաբերություններ, ինքնավստահություն, ինչ-որ բան ինքնուրույն անելու ունակություն՝ կարողություն, և այլն): Ուսումնասիրության ընթացքում սովորողից պահանջվում է, որ նա ուղղահայաց գծերի վրա (100 մմ-ոց սանդղակների) («-») նշանով նշի, թե ինչպես է գնահատում իր մեջ այդ որակի զարգացման ռեալ աստիճանը տվյալ պահին և այնուհետև («x») նշանով նշի այն չափը, ըստ որի այդ որակների զարգացման մակարդակը կարող է լիովին համապատասխանել իր ներուժին, կարողություններին, կբավարարի իրեն և նա կզգա, որ ինքն իրենով հպարտ է:

### Ինքնագնահատման սանդղակ



— Ինքնագնահատականի ռեալ մակարդակ

✗ Ինքնագնահատականի ակնկալվող մակարդակ ըստ կարողությունների իրական գնահատման

### Գնահատման սանդղակ

Ակնկալվող մակարդակ (մմ)		Ինքնագնահատական (մմ)	
Ցածր	< 60	Ցածր	< 45
Միջին	60 - 74	Միջին	45 - 59
Բարձր	> 75	Բարձր	> 60

### Աղյուսակ 4

Ինչ արդյունքներ էլ որ ստացվեն, դրանք կարելի է դիտարկել որպես ինքնաճանաչման ևս մեկ քայլ: Մեկ թեստով դժվար է սովորել և ճանաչել ինքդ քեզ, անհրաժեշտ է ամենօրյա աշխատանք սեփական անձի վրա: Այս նպատակով կարելի է աշակերտներին առաջարկել, որ դիտորդական կամ ինքնազարգացման օրագիր պահեն:

**Աշակերտների ինքնագնահատականը շտկելու համար կատարված մի շարք միջոցառումներից հետո, ինքնագնահատականի մակարդակը պարզելու կիրառված մեթոդները նախատեսվում է նորից կրկնել:**



## **Եզրակացուք լուսն**

Այս հետազոտությունը նվիրված է բուն խնդրի լուծմանը՝ **ավագ դպրոցական տարիքի աշակերտների համարժեք ինքնագնահատականի ձևավորումն ուսումնական գործընթացում:** Սա լուծելու ամենաարդյունավետ միջոցը համարժեք ինքնագնահատականի ձևավորումն է դասարանում, դպրոցում ուսումնառության ժամանակ: Պայմանը՝ համակարգված բնույթի աշխատանքների իրականացումն է, հաշվի առնելով այս տարիքի երեխաների հոգեֆիզիկական առանձնահատկությունները: Ինքնագնահատականը զարգացնելու գործընթացը շատ բարդ է և կախված բազմաթիվ գործոններից, հետևաբար, անհատականության ներդաշնակ զարգացման համար 15-18 տարեկան սովորողների որակները մշտական ուշադրություն են պահանջում, բարյացակամ, հոգատար վերաբերմունք և մասնագիտական ուղղորդում ուսուցիչներից և հոգեբաններից:

Ինքնագնահատման հիմնական և շատ էական հատկանիշն է ինքնակատարելագործման, ինքնատիրապետման, ինքնակարգավորման հնարավորությունը և սեփական գործունեության անկախ անաչառ գնահատումը: Սովորողների համար բավականին դժվար է օբյեկտիվորեն գնահատել իրենց ուսումը, գործողությունները, քանի որ դրանք արդեն ձևավորել են մինչ ավագ դպրոցահասակ դառնալը, ապրել են այլ ռեժիմով, երբ իրենց գործունեության և վարքագծի գնահատման գործառույթը իրականացվել է մեծահասակների կողմից՝ ծնողներ, մանկավարժներ, ուսուցիչներ, մենթորներ և այլն: Սակայն կրթական գործոնների ազդեցության տակ ավագ դպրոցում աշակերտի ինքնագնահատականը աստիճանաբար ձեռք է բերում, անկախություն, կայունություն և ստանձնում է իր վրա կրթական և ճանաչողական գործունեության մոտիվացիոն գործառույթները, որոնք այս փուլում երեխայի համար հիմնական են:

Առողջ ինքնագնահատականը զարգացած հուզական ինտելեկտն է՝ զգացմունքները ճանաչելու և դրանք կառավարելու կարողությունը: Ուստի դպրոցական ուսումնառությունն ամբողջովին պետք է նպաստի դրա ձևավորմանը, ամրապնդմանն ու զարգացմանը :

**Ելնելով վերոհիշյալ գիտական փաստարկներից՝ նախատեսված է հետազոտական աշխատանքում նշված մեթոդները կիրառել առաջիկա 2022-2023 ուստարում մեր դպրոցի 10-րդ և 12-րդ դասարաններում:**

## **Գրականության ցանկ**

1. <https://hy.warbletoncouncil.org/autoestima-2084#menu-1> (14.07.2022)
2. [https://studwood.net/912972/psihologiya/ponyatie\\_samootsenka](https://studwood.net/912972/psihologiya/ponyatie_samootsenka) (16.07.2022)
3. <https://peskiadmin.ru/hy/samoocenka-v-psihologii---eto-chto-vidy-i-ponyatie-samoocenki-v-psihologii.html> (16.07.2022)
4. <https://vunivere.ru/work48108/page4> (17.07.2022)
5. Каменская Е. Н. Психология развития и возрастная психология [Текст]: конспект лекций / Е. Н. Каменская. – Изд. 3-е, перераб. и доп. – Ростов н/Д: Феникс, 2008. – 252 с.